

Արքանէ զորդիս ձեր մարմաւոր,  
Եւ զկողակիցդ ընդ Սատային:

Վարդպակետն յարարածոց  
Զձեզ արքնէ զամենսիխն,  
Զբահանայքդ հաւասար  
Եւ զժողովուրդդ ի միասին:

Այն որ զաշխարհ զամէն ստեղծեաց  
Եւ վայելել ետ մարդկային,  
Նոյն արհնոթիւնն աստուածային  
Իջէ ի տունս այս վ(ե)րստին:

Բամից էից Տէրն երկնային,  
Զձեզ պահէ յիւր հովանին,  
Աստէն ուրախ առնէ մարմով  
Եւ անդ հոգ(ւ)ով (յ)անձառ բարին:

Դանը հր(ե)շտակացն աստուածային  
Զիզ պահապան միշտ եղիցին.  
Եւ թշնամիք ձեր կործանին,  
Թէ մարմաւոր թէ անմարմին:

Այն երկնաւոր թագաւորին  
Որ տարածեաց ի սուրբ խաչին  
Արքնէ շտունս և զժողովուրդս  
Առ հասարակ բարեօք ի լին:

Պարզեատուն ամենայնի  
Որ կերակեաց զամ(են)եսին,  
Զտանս բարիքն առատ առնէ  
Աղաչանօք Աստուածածնին:

Եւ զննչեցեալսն հաւասար  
Որք (յ)աշխարհէ աստի զնացին,  
Յանձնառելի խորանս հանգչին,  
Եւ դասակից սրբոց լինին:

Տեառն Աստուեոյ արժան (ասցին)  
Յաւուր մեծի դատաստանին,  
Լրսել զձայնն երանաւէս  
Թաղակողմեան դասն խառնին:

Ի միասին զԱստուած աւրհնեմց  
Զէայր և զիլովին և սուրբ զՀոգին,  
Եւ ասացուք ամենէրին  
Ի մի բերան Հայր մեր յերկին:

## ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ

—

Քնարերգութիւնը գերազանցապէս հոգեվիշակներու նշմարիս արտայատութիւնն է: Վահան Տէրեանի արուեստը կը կայանայ իր յուղութեան և խորունկ զգայնականութեանը մէջ, և այս վշտահար բանաստեղծին քնարը պայմանադրական ոչինչ ունի, ոչինչ արենստակեալ և մանաւանդ ոչինչ բռնազբօնիկ ու կեղծ: Վիճակը որուն կ'ենթարկուէր անոր հոգին, ճմարիտ ոգեկոչումն էր անցեալի ժպիտներուն և սրտաւէտ արցունքներուն, որոնց եղացրական խորհուրդը կայ միշտ ամէն անխառն հրճուանքի և տարօրէն վաղանցուկ հաճոյքի թունաւոր ծաղիկներուն մէջ:

Տեսապաշտ մըն էր ան, որուն համար կեանքը իր բովանդակ ճամբաներուն վրայ թիշտասակին ուրուանոյ պատկերները ցուցադրեց: Անցեալին թունալից ֆազցրութիւնը՝ որուն բազմագանդակ բիւրեղը փրուած էր իր շրթներուն ոչէմ, աւելի կ'արժէր անոր համար՝ քան երազուած նեկտարը բոլոր անկարծելի և տարաշխարհիկ շոշաններուն: Ծնեք տեսանք թէ ինչպէս անոր հոգեկինականութիւնը մինչև անէացումին խորհրդաւոր սահմանները կ'անցնէր, և զեղեցկին պաշտամունքը անոր տառապանքին մէջ տեսլապաշտ ֆափրի մը յափշտակութիւնն և զգայախարումը կ'ըլլար միանգամայն: Երբ ան կը սիրէր գուշակել ուրուականներու բալածիզ էր ուղոր սիրած մարմիններուն ընդմէջն, միկնոյն ատեն տառապեցնող նիւթին շշափումը և զեղեցկին յաւրժական փախուստը կը զգար իր լուսեզէն և տժոյն մատներուն տակ: Յաւիտենական թափին էր ասիկա, որուն քաղցր թոյնը չապանեցաւ երբեք Յոյսին բաժակներուն մէջ իսկ, ու բանաստեղծը ճամակերպ և անստուած՝ (որովհետ իր տրունը այնպան մեղմիկ է, որքան զեփիւին զգուանքն վէտիչն լիճի մը տրումօրոք մրմունչը) վիշտերուն կախարդանքը ֆնտուց: Ամէն ինչ անսահման դիւթանք էր այն ատեն, երբ ցաերը կը ծաղկեցնէրն երգիւու ամբողջ պարտէց մը հոգիներու կապոյս աշխարհին մէջ, երբ Յսուերը կը ժապարէր Լոյսին ըրթունքներուն վրայ իր անոյշ մահէր գտնելով...

Բնութեան պատկերներուն և իր հոգեկան աշ-

1. Տեսնէլ Փարիզ հրատարակուող «Անրածնուենդ» նախորդ շրջանի կերպին թանի քիւնը:

խարհին միջեւ այնքան տարուած է այն ցոլացումը՝ որ պիտի ըսէի թէ կը յայտնուի միայն իբրև սպիտակ տեսիլ մը յանկարծոյն անհետացող։ Բայց անիկա քանատեղին համար ամէն ինչ է, աւելի քան իրական աշխարհը, և անոր ամրող պատկիրը իր ցաւազին յանձնանքը կ'ունենայ տիրութեան ու վշտի ժամերոն։

Արտաքին իրենցիները իբրեւ առանձնայատուկ իրականութիւնը կը ստանան իրաքանչիւր բանատեղին մտածումն։ Անոնք միննոյնը չեն կրնար ըլլալ երբեք, և անոնց հորիզոնին վրայ ծաթող արեներն ալ կը տարբերին։ Բայց կրկնակ զգացում մը կայ միշտ իրաքանչիւր քերթուածի մէջ, իրականարինը իրու ահմանառորում, և մտափումի իբրև անձնուն, կամ պարզօքն արտայայտութիւն իրականարինը առան իր ճշմարիտ ահմանենեւ անդին անցնելու, մտածումին անձնունվը պէտք է պարփակուի իրաքանչիւր բանատեղօքան երգի մէջ, ինչպէս զիտենք որ Յոյն արուեստագէտը Կ'երեակայէր այնքան՝ որքան միայն անհրաժեշտ էր գտնելու համար տեսական Ձեր արդարական արտայայտութեանը մէջ իր Բովանդակ Մտածումին։ Այս պատճառու իսկ քերթողը պէտք է ունենայ երկու տիրական, միացեալ և անհրաժեշտ ձիրքը, որոնք են զգացումին անսահման ընդունելիութիւնը և ինքնենուրիհինը մտածումին։

Մտածումը երբ կը տիրապետուի հզօր դատողութենէ մը, զգայնականութեան խորհրդառոր հմայքը կ'եղծանի, և քերթուածին անհուն բռվանդակութիւնը կը կորոնցնէ իր ճշմարտագոյն և գեղեցիկ արքենքն Պատկերներն անկայն արտաքին աշխարհէն է որ կը ստեղծուին մեր հոգիներուն մէջ, գոյնէ անոնց նախարարակիրը մննք գուրսէն կը ստանալը, և ներքին զօրութիւնն է որ երբեմն վարպետի վրձինով մը կ'աւարտէ զանոնք, և այն ատեն քերթուածը, ինչպէս արուեստի ամէն երկ կը հասնի վսկմին, երբ միաւորուիրին կայ այլազանուրեան մէջ, ինչպէս կը հաւատար Պլատոն։

Այսուետք տեսանելի աշխարհն է միայն։ Ինչ որ անտեսանելի է, անոր իսկ ցոլացումն է բացարձակորէն, և մենք որքան ալ խորասուզուած ըլլանք մեր անձնն և նոգին ինքնիրդաւոր երկրաժանումն մէջ, անկարիի է ժխտել արտաքին երեսոյթներու տիրականացումը մեր բոլոր զգացումներուն և մուծուումներուն վրայ։

Վաւեան Ձերեան, ինչպէս ամէն զգայուն բանատեղը, իր տիրապին յուզումները կը պարուէ վերջալուսային ստուեներով և կապոյս իրիկուններու թաւշանման վարդերանգով։ Անոր

համար զիշրամուտի խաւարը կարօտագին սէրն է որ կու զայ երկիրը համբուրելու։

Աստղերն են ժպտում լուսեղին նազով.  
Խաղադ դաշտուրը մութն է համբուրում.

Գննադատութիւնը պիտի կարենամք վերլուծել այն բացում զգացումը որ անդունչ իրերուն կեանք մը կու տայ և զանոնի ի մի կը ձուլէ կախարդական հրայրի մը բոցին մէջ։ Ինչ է այն եռակարօտը որ կը տանչէ մեզ, երբոր կը զգանք միր սիրտերուն ամայութիւնը, և ամյնը որ մեզ կը կանչէ անջական ափունքներէն, մուրմուկ երազը՝ որ մեզմօրէն և զիւթանքով կը հսկուի անձանօթ արևեներու ուսկեցել ապշրշութեան շուրջութիւնը։

Արուեստը հրաչը մըն է, և քերթողութիւնը կրաչակներուն հրաչքն է, երբ մանաւանդ անոր մէջ սերտօրէն միացած կը գտնենք իրականութեան սահմանաւորումին հետ մտածումին անսահմանութիւնը։ Հրաչքը կը զարդի գոյութիւն ունենայէ, երբ մնեք բնութեան ամբողջ օրէնքները քոլազերած ենք։

Գննադատութիւնը կը հասնի մինչև ամենանիրուունկ ճշմարտութիւնը քերթուածինը, մինչև անոր սիրտը և սրտին բաբախումները, բայց անսահման բնոյոյ վափկութիւնն է երազի շուշաններուն զրու անձանօթ պարտէզներէն քաղող հոգիներուն միայն կը զան։

Ես Կ'ընդունիմ որ բանաստեծը մը չի կրնար բացարձակ թենայտակ հանդիսանալ, (հակառակ պարագային ուր պիտի մնար իր քերթուածներուն փորհրդաւոր անուշութիւնը, որը չեն զգար երքք ամէն անոն՛ որ դատողութեան ամայի սահմաններուն մէջ զգացումն վարդերը կը թերթատեն անտարբէր), բայց իր քննադատութիւնը արուեստի երկ մըն է ինքնին, որովհետեւ անոր ծեռքերը նոյնքան վափկութեամբ պիտի քաղեն արդէն քաղուած տժգոյն կամ երփանազառ ծաղիները անրջական ափերուն վրայ։ Ան զեղեցին պաշտամունքովը պիտի մօտնեայ միշտ Տիրութեան նզնանեայ սափորին և ծնրադիր պիտի արտասուէ Յիշատակին ասուեալավար թեհերուն տակ։ Ան պիտի վերլուծէ երկը թերես բոլորուն արքերը զգացումով մը, ստեղծողին մտածումն արքերի ճշմարտութիւն մը, եթէ ոչ զանէ անոր ճշմարտութեան մէկ նոր ցոլացումը գրանելով քերթուածին մէջ, և այս է միայն քննադատութեան արժէքը իրեւ արուեստ։

Տէրեանի ինքնեղականութիւնը բացայայտօրէն

կը զգացուի իր գրեթէ բոլոր քերթուածներուն մէջ, Աշխարհը անոր համար արտաքին զօրութիւնն է, որ յաւիտենական երազի մը չափ գեղցիկ տառապանքներ կու տայ իբրև անծանօթ անհունութիւն: Բայց ամէն արտաքին պատկեր ներքին պատկերի մը մէջ իր խորհրդաւոր արձագանքն ունի, և այդ արձագանքին արտայայտութիւնը և արտայայտութիւնը ստեղծուած վիճակին է միայն քերթողութիւնը: Եթե հազարաւոր մարդկի անտարբեր կ'անցնին կեանքի սովորական ուղիներէն, բանաստեղծ ամէն օր գեղցիկ նորութիւն մը կը տեսնէ անոնց վրայ, իր ինքնամփոփ և մտասոյզ թափառայածումին մէջ, ամէն օր մանուկի մը, պատանիի մը հըրանուալքը անոր սրտէն կը բղի ի տես զալարագեղ ծառի մը՝ որուն սազարթները կ'օրորուին և անցնող հովին ալշիներուն ծովային մրմունչներ կու տան: Անոր համար՝ աշխարհը միշտ նոր է և սակայն միշտ միհնոյնը, յարափոփոխ և անայլայլ... Անվերջ կախարդանք մը կայ անոր հոգիին մէջ, անվերջանալի երազ մը, հեքաթմը, ցորոք մը: Իրականութիւնը իրազին ստուերն է անոր համար: Երբոր բնութիւնը կը յայտնուի, ինքնեզօրէն կը զգացուի անոր բովանդակ հրապոյը, կամ տիրութիւնը՝ որոնք անհուն ընդունելիութեամբ մը կը տպաւորին խորապէս քերթողին միտքը: Աստիքրուն ժափուը, երկնքին պարտէզը անոր կը յիշեցնէն, թէ ինքն ալ իր հոգիին մէջ երկնք մը ունի, բերկրանք մը, անընական ուրախութիւն մը.

Նև կախարդուած եմ միշտ նոյն երազով,  
Միշտ նոյն ցնործն է իմ սիրաց այրում:

Նև հիմա, երբ խաւարը հնտզենտէ աւելի կը մթագնի.

Մանեցած երկնից սատղերը պայծառ  
Ժպառում են բաղազ բու ազերի պէս:

Լամարթին լուսնակի լոյսին մէջ մնուեներու հոգիին փայը կը տեսնէր: Տէրեան սատղերը կը նմանցնէ ժպառուն ալքերու, որոնց մէջ խաղաղութիւնը կը լճանայ: Բայց աստղերը որքան ալ մօտիկ երկին, այնքան հնուար են անոնք, ինչպէս երբեք պիտի չի համբուրուին հողեզն շրթունքներէ, և բանաստեղծին սատուազալութիւններէն իսկ, գեղեցկութեան ալշիկ կ'առունէ, երբ կապոյթին անսաման միջոցները կը բնակին այդ անձուկ բանտին մէջ:

Տes յεux, tes larges yeux, aux clartés éter  
[nelles].

Վահան Տէրեանի հեռակարօտը անդիմագրելի տրտութեամբ կը համակէ բոլոր զգայուն սիրտերը, Երկինքն մօտիկցած աստղերը կը ժպտին, և ահաւասիկ բանաստեղծին արտասուրը, ինչպէս ամէն քերթուած նունութիւն մըն է կապոյտ կամ սպիտակ, արտասուրի լիճն վրայ ծաղկած.

Իմ լքւած սրտի կարօտը անծայր  
Անն ինչ մէջ որոնում է թեզ...

Վահան Տէրեան ոչ մէկ ձգուում ունի, և արդէն այս պէս կ ըլլայ ճշմարիտ քնարերգակի մը, ինչպէս ամէն ճշմարիտ արուեստագէտի առաջին արժանիքը: Արուեստը անօգուտ է, և օգտագործեան զաղափարն իսկ անոր համար սպաննի թոյն մըն է, որով պէտք չէ երբեք լեցնիւել բիուրեալյային բաժակները զեղեցկալցուն ստեղծումին: Բարոյացումիր կամ դասասնդութեան ձգուումը մինչև իսկ՝ վիպապաշտներուն միշն իրենց անմահութեան ճամանակ զանոները՝ այսօր քննագատութեան մը առջև կը տանի: Վկեթոր Հիկո չի խոսափիր: Լամարթին այսոր կը տաղականէն մեզ, ամէն անզամ որ փելիսոփայել և բարոյացնել կը սկսի: Հելլէր իր մեծ քերթողի բարձրութիւնը կը կորսնցնէ, և կը մնայ որպէս զիրազանց մոտադող մը և մանաւանդ հրաշունչ հուսոր մը, իր թարուերգական անվիճելի համբաւէն գուրս: Հիկոյապաշտներն իսկ այսօր ըմբռնած են վարպետին այն մեծ և ակներկ թերութիւնները՝ որոնց պատճառ են եղած լոկ իր բարոյագէտի և քարոզիչի եռանդաբորբ այլ մաշկի թուշեցները:

Վահան Տէրեանի բանաստեղծութիւնը զերծ է բարեբախտաբար այսօրինակ թէրութիւններէ: Խոկ անոր արժէքներուն մասին զեռ ևս կան ըսելիքներ՝ որոնց համար անհրաժեշտ է խորազնութիւնը:

Քնարերգական պարզ քերթուած մը առաջին ընթերցուումվ կարելի չէ գտանէ: Պէտք է հասնիլ մինչն իոն ուր զգացումին իսկնեղութիւնը պատճառ եղաւ անոր ստեղծումին, խորհրդաւոր հարսնեակի ուր թիթեննիկը թէեր կ'առունէ, երբ կապոյթին անսաման միջոցները կը բնակին այդ անձուկ բանտին մէջ:

Քնարերգակ բանաստեղծին առանձնայատկութիւնն է ուրախութեան և տրտութեան, ժպիտին և արցունքին ամբողջական ձայնաշարը հնչեցնել: Իր զգայնականութիւնը արտաքին աշխարհի ամե-

նափոր մէկ բաղխումէն իսկ խորապէս կ'ազդուի:  
 Ան է որ աստուածային գաղտնիքն ունի հոգեց  
 վիճակով թարգմանելու ամէն ինչ՝ որ Կը շրջա-  
 պատէ իր էռութիւնը, ամէն ինչ որ երկաներու  
 ընդէջէն կը յայտնուի անսահման խորհուրդի  
 մը և անհուն գեղեցկութեան մը պէս: Իր գեղա-  
 րուեստական եսապաշտութիւնը միայն և միայն  
 բնակուած է ամբողջապէս արտայայտորենակաց  
 ամբոխով մը, և արտայայտութիւնը հոս միևնույն  
 հօր իմաստն ունի ինչպէս անգրիերէնի մէջ.  
*expressionist:* Քնարերգակ բանաստեղին գգայ-  
 նականութիւնը անպիքը վրգովմունքի մէջ է միշտ  
 Արտաքին աշխարհն կամ իրու իրականութեան  
 հարուածներէն վիրաւոր՝ իր սրտին բարախում-  
 ները տեսլական հաճոյքներու տառապանքովը  
 կ'արիւնքն... F. Schlegel գերման գեղեցկագէնը  
 իրաւունք ունէր մտածելու թէ այնքան գժուարին  
 էր չշփոթել քնարերգութիւնն և գգայնակա-  
 նութիւնը:

Վահան Տէրեանի պատկերները տարրամօրէն  
 գուշակուած անուշութիւններ են, երփնանկարներ  
 (pastel), որոնց տժգոյն անըշականութիւնը բա-  
 րապէս և այնքան սերտօրէն կը գաշնակուի անոնց  
 մէջ ապրող զգացութեառուն և մտածութեառուն  
 հետ.

Սարի յետեռում շողերը մեան,  
 Անուշ դասերը զատեց կապոյտ մէզ,  
 Տիուր երեկոն զարկել է վրան:

Եւ հոս դարձեալ, ինչպէս միշտ արտաքին  
 պատկերին արձագանքը կ'արտայայտուի ներքին  
 պատկերին մէջ.

Անուշը կարօտով կանչում է քէզ՝ մ'կ:

Ինչպէս հետեւեալ տողերուն մէջ՝ ուր շատ աւելի  
 քաղցր է քնարերգութիւնը.

Մաղեկներն աւա՛ թնթոյչ փակւեցին,  
 Բացեցին երկնի ծաղկիներն անասո.  
 Աւ ասգանաները իմ միրու լորին.  
 — Արդեօս ո՛ւր ես դու, իմ անուզ երազ:

Վահան Տէրեան խորհրդապաշտ մըն է, ինչպէս  
 Մալլարմէ ու Վէլէլէն որոնց խորհրդապատու-  
 թիւնը կը կայանար որոշ բառերու նորակերպ  
 գործածութեան մը մէջ ի նկատի ունենալով  
 միշտ այդ բառերուն հնչականութիւնը, և ուրեմն  
 ամբողջ թերթուածին եղանակաւորումը: Վէլ-  
 էլէնեան խորհրդապաշտութեան ամբողջ թանկա-  
 գին գանձերը շնան անշուշտ Վահան Տէրեանի

թերթուածներուն մէջ: Աղբիւրը նոյնն է: Խնչո՞ւ  
 համար միևնույն մարզարիտները չեն լեցուցած  
 երկութիւն ալ սափորները: Երբ Տէրեանի սափո-  
 րին մէջ կը մենանի ջուրին երգը, Վէլէլէն գիտէ  
 սոր ծիծաղներ տալ անոր: և արձագանզը հե-  
 ռաւոր աղբիւրին կարօտը կը հնչեցնէ:

Մալլարմէս սակայն աւելի մեծապէս կը հեռա-  
 նայ Տէրեանէն՝ իրու երեսութական ձև: Հակա-  
 դրական պատկերներու և բառերու նորութիւնը՝  
 որ Մալլարմէն քերթուածներուն ցայտուն արժէքը  
 կը ներկայացնէ, հազորագիտ է Տէրեանի մօտ:  
 Եւ ինոյ եցացած պարզութիւնը Տէրեանի  
 ոտանաւորներուն՝ զինքը ցոյց պատի տար իրրեն  
 տժգոյն ուխտակից մը՝ կապոյտ և ծիրանիի ան-  
 սահման ու բոցավոտ գոյներուն ի տես զգայա-  
 խաբօրէն վերացած Մալլարմէին մօտ.

L'azur! L'azur! L'azur! je suis hanté!

(Ժարումակելի)

ԱՐՄԵՆԵՐԱԿԱ

## ԹԻՐԵԱՔԵԱՆ ԲԺ. ՑԱՐՈՒԹԻՒՆ ԽԱՆ

(Ժար. տիս բազմ. 1921 էջ 196)

...>...<...

Արիազաթ ԲԱՌԱՐԱՆ Նորոդ տեսու-  
 թեամբը և յաներուածովը, աշխատասիրեց  
 Յ. Թիրաքաբեան, Վիեննա, Մ'սիրարեան  
 Տպարան, 1914: — Թուղթ մը Վիեննակ-  
 ներու վերջը (յէջ 390) կը կարդանք.  
 «Մահօրութիւն: — Ներկայ աշխատասիրու-  
 թեան տպագրութիւնը աւարտեցաւ 1920  
 թուին: Ողբացեալ հօրս հետագայ ձեռա-  
 գրաց մէջ կը կարդամ թէ սուզած և  
 հաստատած է ցըրիւ (Տ. Գրիւ) բառին  
 գործածութիւնը Պարսից մէջ: — Նիւելորը  
 1920, Մ. Յ. Թ.»: Ուրեմն՝ հարկ չկայ  
 յաւելուլ թէ այս հատորը՝ թժ. Յ. Թի-  
 րաքաբեանի ազգին նուիրած ժրաշան եր-  
 կասիրութիւններուն ամենավերջինն է, —  
 արդէն կանխաւ ալ յիշատակուեցաւ:  
 «Արդանայ:» Ահաւասիկ նոր բարգու-  
 թիւն մը որ ամէն ընթերցողի յարգանըը  
 պիտի պահանջէ: — Խորհրդածութիւն մը: